ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

20.12.2018թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆԽԱՓԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-5» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան « » «դեկտեմբերի» 2018թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մերանգուլյանի, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններն և հիմք ընդունելով 20.12.2018թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-5» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը. կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 3.1 կետում նշված «2 703 750 (երկու միլիոն յոթ հարյուր երեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 974 125 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ» բառերով:

1.2. Պայմանագրի 3.3 ենթակետում ամրագրված «դեկտեմբերի 20»-ը բառերը փոխարինել «դեկտեմբերի 28»-ը բառերով

1.3. Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ապրանքների մատակարարման ընդհանուր գինը սյունակի 5-րդ չափաբաժնում նշված «2703750» թիվը փոխարինել «2974125» թվով, ինչպես նաև հանել <<ապրանքների մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:>> բառերը:

1.4. Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.5. Պայմանագրի 3-րդ կետը լրացնել 3.2 ենթակետով.

«3.2 Պայմանագրի գնից՝ 2 974 125 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես

կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Այյունեթվորքս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 38/1, 55շ.
Հ/Հ՝ 900011192052	Հ/Հ՝ 1930042785480100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02588485
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Վ. Մերանգուլյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

POLADYAN KAREN 1911770055

Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2018.12.26 17:20:20 +04'00'

Հավելված N 1
«20» դեկտեմբերի 2018թ. կնքված
«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-5» ծածկագրով պայմանագրի
« » «դեկտեմբերի» 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			դեկտեմբեր	**Ընդամենը**
5	31151120/507	Անխափան սնուցման աղբյուրներ Elite 650 Pro	2 974 125	2 974 125

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192052
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

POLADYAN KAREN 1911770055

Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2018.12.26 17:20:41 +04'00'

ՎԱՃԱՌՈՂ
«Այունեթվորքս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 38/1, 55շ.
Հ/Հ՝ 1930042785480100
ՀՎՀՀ՝ 02588485
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Մերանգուլյան

/ստորագրություն/
Կ.Տ

Վահրամ Մերանգուլյան

þÿNap€at De€avc
þÿDec 25 2018 2